



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1877 ԱՄԻՆ

ԼԻՍԱ Զ

1 ՅՈՒՆԻՍ 1877



ԿՈՆՏԱՆՑՆՈՒՊՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԻԼԵԱՆ

1877

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփան Արարանեան	Վաչագա	Ա.	ԱՅԵՆԱԳԵՏ
Նուբեան Յովհաննէս	Էֆէնտի	Բ.	»
Տիգրան Եռուսեփեան	Էֆէնտի	Գ.	»
Համար Նուստի Ա. Արամեան	»	Ա.	ԱՅԵՆԱԳԵՏ
Մկրտիչ Մեղրեան	»	Բ.	»
Տէրցենց Ստով	»	Գ.	»

ՉԵՌՆՆԱՍՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Խորեն Արքեպիսկոսոս Նար-պէյ	ԱՅԵՆԱԳԵՏ
Տ. Եղիշի վարդապետ	»
Յարութիւն Մէլիք-Գուրի	Էֆէնտի

ԴԱՍՏԻՍԱԿՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Յովհաննէս Նուբեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Խաչատուր Միսաքեան	»	»
Գէորգ Արտուր	»	»

ԿԱԼՈՒՄԾՈՅ ԳԻՒԱՆ

Բարոնդ Հալաճեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Յովհաննէս Աղնաւորեան	»	»
Ստեփան Փափաղեան	»	»

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Մերայէլ Մամիկոնեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Մատթէոս Ալիբաբեան	»	»
Նիկողոս Ալաճաճեան	»	»

ՀԱՄԱՐԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Աննքերիմ Մանուկեան	Էֆէնտի	»
Ալիբաբա Խորասանճեան	»	»
Ստեփան Պէյլիճեան	»	»

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Մատթէոս Եպիսկոսոս Իզմիրեան	ԱՅԵՆԱԳԵՏ
Ալիբաբա Պէյլիճեան	Էֆէնտի
Քրիստոստուր Ղազարուսեան	»

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Գէորգ Սթիֆանեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Տիգրան Եռուսեփեան	»	»
Օղտէն Խոճասարեան	»	»

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Կարապետ Խիճեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Պողոս Պառնասեան	»	»
Արմեն Յէլիկեան	»	»

ԲԱՅՈՒՄ 1877 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

1 Յ Ո Ի Լ Ի Ս 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. ՊՍԵՐԵՍԲԻ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱԳԵՏ. — ՆՈՒՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ (Բ. Աաննապետ)

ԱՂԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ	22. Գէորգ Արմաւրեան	Բ.	Խոսիկատար Ս. Կարապետ.	
ԵՆԴԵՍԱԿԱՆՔ	23. Խաչիկ Մանուկեան	Բ.	49. Միշրան Պաշտմատեան	Բ.
1. Խորեն Արքեպիսկոսոս Նար. Պ. յ	24. Կարապետ Աղաբաբեան	Բ.	50. Պողոս Թորոսեան	Բ.
2. Կարապետ Եղիշի. Սեբեասեան	25. Համբարձում Մարտիրոսեան	Բ. 2	51. Նիկողոս Ալաճաճեան	Բ.
3. Մատթէոս ,, Իզմիրեան	26. Միսոս Գափաճեան	Բ.	52. Տրդատ Փափաղեան	Բ.
4. Ամբաստան Վ. Ռուբինեանց	27. Յովհաննէս Պառնասեան	Բ.	(Գ. Վիճակ)	
5. Գարեգին ,, Թաթարեան	28. Ն. Միշրանեան Տորթոր	Բ. Պ	Բիլիս և	
6. Էղիշի ,, Աղաճեան	29. Պողոս Պառնասեան	Բ.	Գաւրիլ վաչագա	
7. Խորեն ,, Կիւրղեանց	30. Սարգիս Աղաբաբեան	Բ.	53. Արիկ Ռեճեան	Բ. Պ
8. Հմայեակ ,, Գլխարեան	31. Սահակ Աղաբա	Բ. Պ	54. Գրիգոր Ալիբաբեան	Բ. Պ
9. Յովհաննէս ,, Փափաղեան	32. Աննքերիմ Մանուկեան	Բ. Պ	55. Մարտիրոս Յ. Տիգրեան	Բ. Պ
10. Ներսէս ,, Աղաճեան	33. Փէլաքեանեան Տորթոր	Բ. Պ	56. Միշրան Մամիկոնեան	Բ.
11. Պողոս ,, Խոճասարեան	34. Բարթող Գրիգորեան	Բ. Պ	57. Նշան Քաղաղեան	Բ. 2
12. Արիստակէս Վ. Մամիկոնեան	35. Յովհաննէս Յիւլիանեան	Բ.	58. Ստեփան Խնդրեան	Բ.
13. Գէորգ ,, Արմաւրեան	36. Ստով Տէրցենց	Բ.	59. Տէրցենց Մ. Էրզրանեան	Բ.
14. Գրիգոր ,, Աճեան	27. Գէորգ Արտուրեան	Բ.	60. Իլիս Զարեան	Բ.
15. Խորեն ,, Փէլիպեանեան	(Բ. Վիճակ)		61. Յարութիւն Նորաստեղծեան	Բ.
16. Յարութիւն ,, Աղաբաբեան	Պիլիկոս		62. Գրիգոր Մարտիրոսեան	Բ. Պ
17. Յովհաննէս ,, Միշրան	38. Աղաբաբեան Կրիկեան	Բ.	Միշրան	
18. Սարգիս ,, Ստեփանեան	39. Ալիբաբա Խորասանեան	Բ.	63. Կարապետ Պ. Պէրեանց	Բ. Պ
19. Սահակ ,, Տ. Սարգսեան	40. Բարեղ Հայաճեան	Բ. Պ	64. Յակոբ Կորասանեան	Բ. Պ
20. ԱՆՍՏՐԱԿԱՆՔ	ԷՖԷՆՏԻ		65. Յակոբ Պ. Նորաստեղծեան	Բ.
(Ա. Վիճակ)	41. Զարեհ Քիւրղի		66. Տիգրան Եռուսեփեան	Բ.
Գաւրիլատ, Կիւրղի վաչագա և	42. Միշրան Գրիգորեան		67.	
Գաւրիլատի պաշտ	43. Պողոս Դամասկոսեան		Պիլիկոս և Գաւրիլատ	
21. Գրիգոր Աղաբաբեան	44. Սեպուհ Մաղապատեան		68. Յ. Միշրան—Գուրի	
Բ. Բարեղ Պիլիկոս	Խոսիկատար Ս. Խաչ		(Գ. Վիճակ)	
Բ. 2 Բարեղ Պիլիկոս Երզրանց	45. Թադէոս Պիլիկոս		Գաւրիլատ և Իլիս	
Բ. Պ Բարեղ Պիլիկոս Երզրանց պատճառ	46. Ստեփան Յիւլիանեան	Բ.	69. Յովհաննէս Կառնեան	Բ.
	47. Գարեղ Վ. Մարտիրոսեան		70. Ստեփան Պիլիկոսեան	Բ. Պ
	48. Ստեփան Աղաբաբեան			

ԳԵՂԱՐԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
71. Կորնթոսեացի Եպիսկոպոս	Կորնթոսեացի
72. Մկրտիչ Մարտիրոս	101.
Նարեկացի	Քեօքան
73. Յակոբ Ամբաստան	102. Մ. Փարսեացի Տորթոս
Երևանապետ Ստեփան	Աղբալուսի
74. Օգոստոս Խոստատար	103. Ռոբէն Կիւսիսի շէրտան
Թովմացի	Նիկոմիդիոս
75. Յովնանէս Մարտիրոս	104. Կարապետ Ա. Խիսնի
Լյուսի Ս. Եղիս և Ս. Աստուածատէր	Սիւն
76. Գարեգին Յ. Մելիքեան	105. Պետրոս Մարտիրոս
Գործու շէրտ	Հարանիստ
77. Աստիա Խիստար	106.
Հիսար և Պրոքսիմոս	Արարիկ
78. Յովնանէս Նուրեան	107. Կարապետ Խաչիկեան
Նոր ցիւղ և Սրէնիս	Բաղէշ
79. Դաւթար Հովնան	108.
Պարտ	Պարտ
80. Մկրտիչ Գ. Լաստիս	109. Բրիտանոս Գաղարտեան
81. Յովնանէս Կրօնիկեան	Երզնկա
82. Թադէոս Թորթանեան	110.
Քարանձակապետ	Անուսիս
83. Յարութիւն Չիլիքեան	111. Համբարձում Աւստանեան
84. Յարութիւն Գ. Տասնեան	Բարս
(Ե. Միսակ)	112. Յովնանէս Աղուստեան
Ստեփան	Եղիսիս
85. Ալեքսան Գլխար	113. Յակոբ Խիսնի
86. Անտիոս Գլխար	Մանճրլի
7. Եղիսար Մելիքեան	114.
88. Մինաս Ճամբարեան	Հանքե
89. Յակոբ Փարսեացի	115.
90. Յակոբ Ամասեան	Երզնկա և Բարսիկ
91. Նազարէթ Եպիսկոպոս	116.
92. Կոստանդ Կոստանդեան	Թի. քիստուղ
93. Յարութիւն Թիւլեան	117. Տեղեան Գ. Սնանեան
94. Յակոբ Արշակ	Կիստիս
Խաչապետ	118. Գլխար Գլխարեան
95. Արարիկ Ալեքսան Տորթոս	Խաչապետ
96. Խաչատուր Պ. Մարտիրոս	119. Յովնան Երզնկեան
97. Ռիչարդ Պիլիկեան	Պարտար
98. Սիմոն Մարտիրոս	120. Յովնանէս Յովնանեան
99. Սարգիս Արքայեան	
100.	

Մուշ
121. Ստեփան Պ. Պ. Փարսեացի
Տիւրիկ
122. Նշան Գարապետեան
Չիլիքեան և Մարտ
123.
Տրապիզոն
124.
Պարտ
125. Մելքոն Խաչիկեան
Տիգրանակերտ
126. Մելքոն Չարանեան
Վան
127. Սիմոն Մարտիրոս
Արարիկ
128.
Հարկ և Այրարտ
129.
Սիստան
130. Մկրտիչ Յ. Մելիքեան
Ռուստիս
131.
Կարս
132. Արքայապետ Յ. Արարիկեան
Չիլիքեան
133. Համբարձում Մարտիրոս
Գարապետ
134.
Ստան
135.
Սրբիկ
136. Մատթէոս Արքայեան
Երզնկա
137. Լեւոն Պարսեացի
Մարտիրոս
138. Գլխար Վարդանեան
Խոբար
139. Պարսի Պարսեան
Երզնկա
140.

ՕՐԱԿԱՐԳ

Ս. Բարսեղի Ազգային վարչարանի Քարանձակապետ
 Բ. Խիսիկ Ազգային դատարանական, — Երկրորդ բերանումն տեղեկագրոյ
 դատարանական դիմանի :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Յամի 7 1/2 ին տարեանը բացուեցաւ ի ներ-
 կայութեան 62 երեսօտեանաց, որոց վերջին
 թիւն յանդեցաւ 74 ի :

Բնակարանի Առնակարան Գ. Նատի

Առնակարան Լիւնտին ի դիտողութիւն հը-
 բարեկեց երեսօտեաններն Գ. Նատի ատենա-
 գրութեան վրայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — 53 երես և Բ.

սիւնակ. իմ խօսքիս վերջարանն՝ որ է « իսկ
 այսօր ուրիշ ամենակարեւոր խնդրոց նայինք » ,
 սխալ է. սխալ ըլլայ՝ « իսկ այսօր Օրակարգին
 մէջ եղած խնդրոց նայինք » :

Նայնդէս հետեւաւ 54 երես և Ա. սիւնակ
 խօսքիս այն սրբաբերութիւնն՝ որ կարի և որով

ճանաչուեալ, սակայն տիրի ըլլայ. « Եւ ու-
 բովեալն մինչև որ Մայր դիւանի և Նախարարն-
 նիչ դիւանաց կազմութիւնք չաւարտին, չենք
 կրնար ուրիշ գործոց ձեռնարկել, ինչպէս մեր
 կանոնագրութիւնը կը տրամադրէ. ուստի ամեն
 բանէ առաջ հարկ է մեր դիւանաց կազմութեան
 ձեռնարկել և անոնց ընտրութիւնն ամբողջա-
 պընել :

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, Գ.
 Նատի ատենագրութիւնը բուլի գրուեցաւ և
 ՔՆՊԻՆՈՒԵՑԱԻ Ժողովն :

Քարանձակապետ

Ազգային երեսօտեաններէն՝
 Տ. Ներսէս վարդապետ Ստանեան
 Սենեքերիմ Լիւնտին Մանուկեան
 Խաչատուր Յ Մանուկեան

նամակաւ անձնական տիրութիւն ունենալին իմացուցած ըլլալով, ըստ օրինի բացակայ նշանակուեցան ներկայութեան տուածորին մէջ:

Յ.

Հրաժարական

Սամաթիոյ թաղի նորընտիր երեսօտիան ներքին Առատանդ էֆէնտի Առատանդեան նախընթաց նախ օրոշմամբ գրուած նախադասական պաշտօնագրին պատասխանելով, իւր հրաժարականը կրկնած էր: Ուստի հրաժարագիրը կարգացուեցաւ, որ է:

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Նախագահ Աղղային Ընդհ. Ժողովոյ

Ի պատասխանի յարգելի գրութեան որով Ձեր Բարձր Սրբազնութիւնը բարեհաճած է պատուել զնուապատութիւնս ի 13 յունիսի, վաղըն հաղորդելոյ ինձ Աղղային ժողովոյ կողմանէ Սամաթիոյ թաղին երեսօտիան ընտրուելուս վաւերացումն և հրախրելու զիս որ ընդունիմ այս աղղային պաշտօնը, կը մտածամ նախ մատուցանել Ամենապատիւ Բարձր Սրբազնութեանդ ամենախորին շնորհակալիս և երախտագիտական զգացումս իմ այս սրբազան պարտաւորութիւնս կատարելու մասին գործածած բանիցդ համար: Միանգամայն կը համարձակիմ ցատի սրախ յայս աններու թէ ինչպէս վերոյիշեալ թաղի Ընտրողական ժողովոյ խնայուցած եմ, անձնական անյաղթելի պատճառներ կարգիլեն ինձ ընդունիլ այնպիսի պաշտօն մը որ կը խտտովանիմ ըլլալ սրբազան սրբաբ ամեն աղղային անհատի: Համոզուած ալ եմ թէ անոնք միայն ստանձնել պէտք են աղղային պաշտօններն, որոնք կրնան զնել ի ծառայութիւն սիրելի Աղղիս ըստաւորեալ գաղաբար, ազատ համոզումն, ժամանակի և նիւթական զոհողութիւններ ևն. ևն. յատկութիւններ, որք ինձմէ բոլորովին կը պակսին: Ստոր և այսպիսի ուրիշ աւելի ծանր պատճառներ կը պարտաւորեն զիս Ձեր Սրբազնութեան սրտաշարժ և համոզիչ յորդորանայ հակառակ կրկնել հրաժարումս ու մատուցանել

զայն. ևս և ի ձեռս Ձեր Բարձր Սրբազնութեան աղաչելով որ բարեհաճելիբ հաղորդել զայն որ որ անկ է: Մնամ Ամեն. Բարձր Սրբազնութեանդ

16 յունիսի 1877 ամենախորնարհ ծառայ

Օրթագրուչ Կ. Ք. Կոտանդեան

Ատենապետ էֆէնտի յայտնելով թէ քանի որ Առատանդ էֆէնտի կը սնդէ իւր հրաժարականին վրայ, այնպիսի պատճառներով որոց առջև այլ ևս իրեն թախանձելն անօգուտ է, իրր պարզ հրաժարական քուէի գրու, որ ԸՆԴՈՒՆՈՒՆՈՒՆՅԱԻ Ժողովէն:

Գ.

Երեսօտիանական ընտրութիւն

Ատենապետ էֆէնտին Աղղամարայ վիճակէն գաւառական երեսօտիանի մը ընտրութիւն կատարուած ըլլալը յայտնելով, այս մասին Գիււանին յանձնուած գրութիւնները ներկայացուց, որք կարգացուեցան:

Այս գրութեանց առաջինն է Աղղամարայ կաթուղիկոսին մէկ տեղեկագիրը, որով Նորին Սրբազնութիւնը խնայ կուտայ որ վերջին օրերս այդ տեղի թեմական ժողովուրդը խիստ նեղուած ըլլալէն զստ մեծաւ մասամբ կարգալ գըրել չգիտնալուն համար օրինական որոյմաններով ընտրութիւն ընելը անկարելի եղած է, և թէ հետևարար միայն երեք ընտրելիներ ներկայացուցած է թեմական ժողովրդոց և անոնցմէ միայն համար հանրագրել առաջարկած է. այս կերպիւ կատարուած հանրագրութեամբ հաղարի չափ ընտրող երկաթովաճառ Պօլսեցի թէոփիլեան խաչատուր էֆէնտին Աղղամարայ վիճակին երեսօտիան ընտրած են:

Այս տեղեկագրոյն կից կը գտնուէին երկու գրութիւնք, որոց մին էր վերոյիշեալ ընտրելոյն յանձնառութեան նամակը և միւսը Պատրիարքարանի ծանօթագիրը, որով ընտրելոյն հանգամանքը Սահմանադրութեան համեմատ ըլլալը կը հաստատէր:

Ատենապետ էֆէնտին ի գիտողութիւն հըրախրեց երեսօտիանները՝ կարգացուած այն գրութեանց վրայ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Երկու հակառակ կէտ կը նշմարեմ այս խնդրոյն մէջ. առաջինն է որ Աղղամարայ կաթուղիկոս խաչատուր Սրբազանը կանգալի ձև առած է իր առ Պատրիարքարան գրիած տեղեկագրոյն. մինչդեռ կանգալի գրելու արտօնութիւնը միմիայն Արարատեան Աթոռոյ գահակալին կը վերաբերի. առի նոր բան մ'է՛զ որ Ժողովս չկրնար ընդունիլ: Երկրորդ՝ երեսօտիանական ընտրութիւնը ժողովրդական հանրագրով կատարուած է, մինչդեռ Գաւառական ժողովը պէտք էր ընտրել, ինչպէս կը տրամադրէ Սահմանադրութեան 69րդ յօդուածը. հետևապէս այս ընտրութիւնն իրր Սահմանադրութեան հակառակ պէտք է ետ դառնայ:

Տ. ՄԱՏՔԷՆՈՍ ԵՊՍ. — Աղղամարայ կաթուղիկոս խաչատուր Սրբազանին յարաբերութեան վրայ պիտի խօսիմ:

Գիտենք որ Կ. Պօլսոյ Պատրիարքն Արարատեան Մայր Աթոռոյ Հայրապետին փոխանորդն է, և իրր այն՝ Աղղամարայ կաթուղիկոսն իր թեմերուն միայն այս ձևով կանգալի կրնայ գրիել. հետևապէս Սրբազան Պատրիարք Հօր գրիւած այդ կանգալին ընդունելի չէ:

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ ՎՐԻ. — Լը կրկնեմ:

Տ. ՅՈՒՂ. ԲԷ. ՄԿՐԵԱՆ. — Բառ առ բառ կը ձայնակցիմ:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կանգալի մասին եղած գիտողութեանը կրկնելով հանդերձ, սա ալ կը յաւելցնեմ թէ քանի որ ընտրութիւնը գրիւած հրահանգին համեմատ կատարուած չէ, առանց ընտրելոյն հանգամանայ գոչիլ ուղեւ կըսեմ թէ կանգալի ձևին հետ միատեղ ընտրութիւնն ալ պէտք է մերժել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եղած խօսքերէն կը

հասկցուի թէ երկու պատճառաւ այս ընտրութիւնն անընդունելի կը համարուի. մէկն այն է որ Սահմանադրութեան համաձայն չէ եղած ընտրութիւնը. և երկրորդն է կանգալու անղեկագրուած ըլլալը: Կարծեմ թէ այս երկու պատճառն իրարու հետ կապելու չէ. գլխաւորապէս նայելիք բանը ընտրութեան օրինաւորութիւնն է:

ՁԱՅՆԵՐ — ՈՃ, միւսն ալ կարեոր է:

Տ. ՄԱՏՔԷՆՈՍ ԵՊՍ. — Մէկը եկեղեցոյ սահմանադրութեան հակառակ է, և միւսն՝ Աղղային Սահմանադրութեան հակառակ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներքեյք, Գիւանն ըսել կուզէ որ եթէ ընտրութիւնը Սահմանադրութեան համեմատ եղած լինէր, կրնայինք այս կէտը միւս ձևի կէտէն դատել:

ՊԷԿԵԱՆ Ք. ԷՖ. — Կուզի որ Սրբազան Պատրիարք Հայրը յայտնել թէ մինչև հիմա Սոյ և Աղղամարայ կաթուղիկոսներն ինչ ձևով կը թղթակցէին Պատրիարքարանի հետ, եթէ այս ձևով էր, չենք կրնար փոփոխութիւն մտցնել անոր մէջ, խալ եթէ այսպէս չէր, պէտք է այս եկած կանգալին ետ դարձնել: Ուրեմն Սրբազան Հօր պէտք է հարցնել այս կէտը, եթէ հին ձևին համեմատ է եկած կանգալին, կառավարիմ որ չմերժուի. ուրիշ բան է, թէ որ Աղղային ժողովը յիշեալ կաթուղիկոսոց կողմէ եկած կանգալական ձևի խնդրն նկատողութեան տանուլ և մերժել ուղէ, այն տան իրր նոր և խիստ փոփոխ խնդրի՝ Օրսկարգն անցունելու և վիճարանութեանն ենթարկելու է:

ՔԱԶԱԶԵԱՆ Յ. ԷՖ. — Կերկրորդեմ:

Տ. ՄԱՏՔԷՆՈՍ ԵՊՍ. — Պատրիարքարանի մէջ հանդիարած եմ Սոյ և Աղղամարայ կարթուղիկոսական գրութեանց. Սոյ կիրակոս Գ. կաթուղիկոսի և Աղղամարայ Պետրոս կաթուղիկոսի կողմէ եկած գրութիւնները պարզ նամակի ձևով են. նոյնպէս են Սոյ այժմեան Մըլըլըտիչ կաթուղիկոսի գրութիւնները: Պօլսոյ

Պատրիարքութեան ընդունելի կոնդակը միակնայն իջմիածնայ կաթուղիկոսի կոնդակն է :

ՊԵՎԵԱՆ Ք. ԷՖ. — Կարծեմ, թէ այս մասին Սրբազան Պատրիարք Հօր բացատրութիւնը պէտք է :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ կը փափայրիմ Սրբազան Պատրիարք Հօր բացատրութիւնը ընդ. և յետոյ իմ կարծիքս յայտնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայր, յայտնի կը փափայրի Ձեր բացատրութիւնը ընդ թէ ի՞նչ ձե կը գործադրուէր մինչև հիմա :

Ս. ՆԱԽԱԳԱԷ. — Ետտ հաւանական է որ Խաչատուր կաթուղիկոսի անփորձաւու ըլլալն ծնունդ առած է այս. իւր նախորդները սորա գաղտնի նամակ կը գրէին և ոչ կոնդակ. ինքն ալ երբեմն սարգ նամակ կը գրէ : բայց միշտ իմ կողմէն իւր նամակներուն միայն սրատախանքն առած է, իսկ կոնդակներուն ոչ :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ մասնաւոր տեղեկութիւն ունեի թէ Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսներէն Պատրիարքարան կոնդակի զտուելու սովորութիւն չկայ. ուստի քանի որ ասանկ սովորութիւն մը չկայ, պէտք է ըստ իմ թէ կոնդակը և թէ ընտրութիւնը միանգամայն մերժել :

ՊԵՎԵԱՆ Ք. ԷՖ. — Սրբազան Հօր տըւած բացատրութեան վրայ ես ալ կը ձայնակցիմ Երուսաղիմեան Էփէնաթիին :

Տ. ԱՄԲՐՈՂՈՒՍ ՎՐԴ. — Կը կրկնեմ և ես Երուսաղիմեան Էփէնաթի ըսածները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն մերժման առաջարկութիւնը բուէի կը դնեմ, որ երկու կէտէ կը բաղկանայ, զվտուորն է ընտրութեան հակասահմանադրական ըլլալը, իսկ միւսն՝ որ է կոնդակի ձեւը, եկեղեցական կէտ մ'է, որ կը միանայ առաջնոյն հետ :

ՊԵՎԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ որ

այդ երկու կէտերն իրարմէ բաժնուելով, զատ զատ քուէի զրուին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եկեղեցական մասը չգիտեմ, բայց ընտրութեան կէտին զաւրով, որոյ համար հակասահմանադրական է կըսուի, գիտեմ որ ուրիշ վիճակներէ այս կերպիւ եղած ընտրութիւններ արդէն ընդունուած և վաւերացուած են : Աղթամարայ վիճակը քաղաք չունի. գրեթէ բոլորը գիւղեր են, որք չեն կրնար զատ զատ երեսփոխան ընտրել և Գաւառական ժողով կողմէ, վտան զի վերջին աստիճան տղիտութեան մէջ են : Այս նկատմամբ Սահմանադրութեան դէմ չհամարուիր այս ընտրութիւնն : Իսկ կոնդակի ձեւին համար ըսելիք մը չունիմ :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Վրիտանացուր էփէնաթի խնդրոյն սահմանադրական կէտը կը զրտէ և կըսէ թէ ուրիշ տեղերէ ալ Գաւառական ժողով չունենալով հանդերձ ընտրուած երեսփոխանները խողովն ընդունուած և վաւերացուած են : Սոյոյք է թէ և որ այսօրինակ բացատրութիւններ եղան խողովոյս առջի մի քանի նատերուն մէջ, բայց վերջին անգամ սրուում ալ եղաւ որ միւսանգամ այս տեսակ բացատրութիւն ի գործ չդրուի : Եթէ անկարելի համարուած է Աղթամարայ համար Գաւառական ժողով կողմէ, պէտք է նախ այս սարագայն տեղեկագրուի վարչութեան, և Կրօնական ու Վաղ. խողովները նկատողութեան առնելով՝ իրեն զատ խնդիր բերեն խողովոյս, առաջարկելով թէ Աղթամարայ գաւառին նկատմամբ այս կէտը մեղմացնել հարկ է : Այդա թէ ոչ, Աղթամարայ կաթուղիկոսն՝ որ ըսկ առաջնորդ մը կը համարուի իւր վիճակին, իրաւունք չունի ըստ իւր քմայ ընտրութիւն կատարել և ներկայացնել մեզ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սնցեալ նախն ալ այսպիսի խնդիր մը երևան ելաւ Պաղտատի երեսփոխանին ընտրութեան առթիւ, բայց խողովն որոշեց զայն ընդունիլ, այս անգամ ալ Աղթամարայ համար նոյնպիսի խնդիր մը երե-

ւան կուգայ և զոնէ սրտերուդմական վիճակի մէջ գտնուիլը ուշադրութեան չառնուիր. ըսել թէ այս ինչ թերութեան կամ ձեւի համար կը մերժենք. կարծեմ թէ շատ զէշ ատուորութիւն կընէ Աղթամարայ վրայ : Ըստ իմ՝ Աղթամարէն եկած այս տեղեկագիրը համաձայն է Խրիմեան սրբազանի սրատրիարքութեան օրով գաւառները զրկուած ընտրական հրահանգին. ուստի կառաջարկեմ որ այս ընտրութիւնն ընդունուի :

Գալով ձեւին, և թէ ընդունինք՝ զույգ զէշ բան մը ըրած պիտի ըլլանք. ուստի զայն մերժելու համար պէտք է կանխաւ իրր յատուկ խնդիր կրօն. խողովոյ յղել և տեղեկագիր մը ուղել, որովս զի այդ տեղեկագիրն հետևողութեամբ մերժուելով, Աղթամարայ կաթուղիկոսին ալ հրահանգ մը արուած լինի թէ ի՞նչ ձեւով պէտք է վարուի այսուհետև :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Կարծեմ թէ ի զուր կը վիճարանինք. ընտրութիւն մը կայ՝ որ կոնդակաւ տեղեկագրուած է մեզ. և թէ կոնդակը կընդունուի՝ այն ատեն ընտրութեան խնդիրը յազուելուն տեղի կը մնայ. բայց ես կը տեսնեմ որ խողովին կարծիքն այդ կոնդակը չընդունուելու կողմն է. ուրեմն չարժէք որ աւորուեալութեան վրայ սցարան վիճարանութիւն լինի : Նախ՝ պէտք է հարցնել խողովին թէ կոնդակը կընդունի՞ : Երբ կոնդակը չընդունուի, ընտրութիւնն ալ ի միտսին կը մնայ. արդէն նոյն իսկ ընտրութեան վաւերացուելու կողմն եղող երեսփոխանայ ոմանց խօսքերուն մէջ ալ սպորինութիւն կայ ըսուեցաւ. ինչո՞ւ ուրեմն ի զուր վիճարանինք այսպիսի խնդրոյ մը համար :

ՁԱՅՆԵՐ. — Վրուէ՛ :

Այս միջոցին Պատիաղեան, Վրիտանացուր և Պէլիեան Էփէնաթիները խօսք ուղեցին :

Ատենապետ Էփէնաթի խօսքը զրոյցաւ աւանդ՝ յայտնելով թէ քուէ խնդրուներ ըլլալուն համար վիճարանութեան շարունակութեան մասին խողովին կամըը պիտի հարցնէ :

Պատիաղեան Էփէնաթի կոնտնական զխօսքութիւնն ունենալը յայտնելով կրկին խօսք ուղեց, և խօսքն իրեն արուեցաւ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնադրութեան Յրդ յօդուածը կը յիշեցնեմ, որ երեսփոխան կան ընտրութեանց տեղեկագրերու նկատմամբ կըսէ թէ՛ օրինական թերութիւնն ունեցող տեղեկագիրը Նոխաձեռնութեան զիւտնին կը յղուի և վաւերացումն ուրիշ նատի կը մնայ : Աւրեմն չենք կրնար հիմա հաւանաբար զարս նեւտել. ու՛ր է իմ զխօսքութիւնս : Իսկ եկեղեցական խնդրոյն մէջ զորձ չունիմ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԷՖ. — Պատիաղեան Էփէնաթի կոնտնական զխօսքութիւնը միայն երեսփոխանական ընտրութեան մասին կը վերաբերի. սակայն ոչ միայն ընտրութեան մէջ թերութիւն տեսնուեցաւ, այլ և այդ ընտրութիւնը հաղորդող տեղեկագրի ձեւին համար ալ ըսուեցաւ թէ օրինաւոր չէ. ուստի այս կէտն ալ սրուելու է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն երկուրի կը բաժնուի. նախ՝ ձեւի խնդիր մը կայ, այն է կոնդակաձեւ գրութիւն մը ուղեկալ առ Սրբազան Պատրիարք Հօրն, որ սկզբունքի նկատմամբ խիստ կարեւոր կէտ մ'է. կարծեմ թէ ձեւի մասին ամենեղ համաձայն էր զայն մերժելու :

(ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :)

Մէյ մ'ալ ընտրութեան խնդիր կայ, որ սահմանադրուելս սրահասուոր կէտեր ունի : Հիմա զիւանը կըսէ թէ այս երկու խնդիրն իրարու հետ կապելու չէ. նախ՝ ընտրութեան սրահասուոր ըլլալն կամ չըլլալն որոշելու է. Պատիաղեան Էփ. կոնտնական տրամադրութիւն մը յիշեցուց, որոյ համեմատ ընտրութեան խնդիրն՝ եթէ սրահասուոր ըլլալն որոշուի, Նոխաձեռնութեան զիւտնին յղել պէտք է. իսկ թէ որ ընտրութիւնն ընդունելի գտատուի, կը մնայ ձեւի խնդիրն, որուն պէտք չէ զսէլ ընտրութիւնը : Ձեւի մասին Սրբազան Պատրիարք Հօրը կընայ

պէտք եղած աղբարարութիւնը հաղորդել Աշխատարայ կաթողիկոսին՝ ապագային զգուշութեան համար :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Ց . ԷՖ . — Փառազան Էֆէնտի կանոնական գրտադրութիւնն իրաւացի է անոր համար կընդունիմ որ ընտրութեան մասը յըստի Նախաձեռնութեան զիւանին : Իսկ կանոնակի մասին՝ զիւանի առաջարկութիւնը նմանապէս կընդունիմ :

Տ . ՄԱՏՅԷՆՍ ԵՊՍ . — Կառաջարկեմ որ կանոնակը չանցնի ատենադրութեան մէջ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ . — Թէոր ժողովն ընդունի որ այդ կանոնակը չանցնի ատենադրութեան մէջ, մեզի համար չկայ ըսել է այն, և հետեւաբար սրբաւնակութիւնն ալ ի դուր է :

Տ . ԵՋՆԻԿ ՎՐԻ . — Կառաջարկեմ որ ընտրութեան խնդիրը յըստի Նախաձեռնութեան զիւանին . իսկ ձեռն խնդրոյն գալով՝ ըստ որում կրօնական խնդիր է, կառաջարկեմ որ այն ալ յըստի Չեռնհասութեան զիւանին ի նախարըն նախնիս :

ՋԱՅՆԵՐ . — Չեռն խնդիրը նախարընութեան յղել հարկ չկայ . այդ կանոնակն անընդունելի է արդէն :

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Ինչո՞ւ հարկ չը կայ նախարընութեան . թո՛ղ տեղեկազիր մը գոյ, մերժում առաջարկէ, և մեր ալ այդ մերժումն ընդունինք : Առանց տեղեկազրի՛ մերժման սրտատրամադարութիւնը չեմ կրնար իմ մասին ստանձնել :

[Արեւիկ]

ՄԵՐԵՄ-ԳՈՒԼԻ Տ . ԷՖ . — Քաղաքի անկան ձեռն վրայ պիտի խօսիմ : Ընտրութեան տեղեկազիր մը ներկայացած է, որուն մէջ օրինական թերութիւն նշմարուելուն համար առաջարկու է եղաւ որ Նախաձեռնութեան զիւանին յըստի, ասոր զէմ ընդլիստիս զգանաւ :

ցաւ : Կը մնայ անդին՝ տեղեկազրին կանոնակի ձեռն գալուն խնդիրը . թէ որ այս բանը մեր աչքին մեծ զարկու և ասոր մէջ եկեղեցական դատարարութեան զեղծում մը կը նշմարենք, ինչ հարկ կայ տընտընալու և նախարընութեան յընդել տեղեկազրի ստրասելու . այժմէն ձեռ կը մերժենք և ընտրութեան խնդիրը կը յղենք նախարընութեան :

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Մերժել ատեն ատեն ձեռքերնիս է . թէ այսօր և թէ՛ 15 օր ետքը մերժելով բան մը կորսնցուցած չենք ըլլար . բայց խնդիրը նոր է մեզի համար . ինչ հարկ կայ շտապել . թերեւ մեր մէջէն մաստաբանող պիտի ըլլայ թէ ընդունելի է . թո՛ղ մենէ ընտրեալ սրաշտոնական մարմին մը որսածառարանեալ տեղեկազրի բերէ, և լու է մեզի թէ մերժեցէք . այն ատեն մեր ալ կը մերժենք . 15 օր ետքը մնալն ինչ մնաս կը ծագի, չեմ հասկընար :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ . ԷՖ . — Օղակն Էֆէնտի չաճատարներ կըսէ, և կառաջարկէ որ ձեռն խնդիրը քննութեան տակ զրուի . այս կերպով կրտածանայ ներքե զնեւ կողէ խնդիրը . բայց կարծեմ թէ բնա կասկած ընելու տեղի չմնար երբ Սրբազան Պատրիարք Հայրն ու Մատթէոս Կաթողիկոս կը յայտարարեն թէ ինչպէս Սիոնայեցի և Աշխատար կանոնակ չեն կրնար զըրկել Պօլսոյ Պատրիարքութեան : Այս յայտարարութիւնը՝ կարծեմ բաւական է որ և է կասկած գրելու, և հարկ չմտաւոր խնդիրը քննութեան յանձնելու :

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Թերեւ ևս պիտի մաստարանեմ և անցեալէն օրինակ բերելով պիտի ասորոյց ցանեմ թէ կրնայ ըլլալ . ահաւս պիտի ականջէս վար բող կայ թէ Սոյ կաթողիկոսն կանոնակ եկած է ժամանակու Քաղաքական ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Մեր Կանոնադրութիւնն սկզբունք մը ցոյցեր է . այն է՝ որ և է խնդիր ժողովն որչում ընդունելէ առաջ իր

զիւաններէն մէկուն նախարընութեան անցնի . խնդիր մը սրչափ սրտը երեւայ մեր աչքին, կրնայ դարձեալ կնճատ կարմ մը՝ ուշադրութենէ վրայած կէտ մը ունենալ . ուստի այս կանոնակի ձեռն խնդիրն ալ մերժելէ առաջ կրնանք նախարընութեան յղել, ինչպէս Օղակն Էֆէնտի կառաջարկէ, բանի որ Կանոնադրութիւնն ալ իր սկզբունք կը սրամազրէ, և այս յըստն ընելով բան մը չենք կորսնցուցնէք : Ուստի Պիւսանը կը սրտուստրի նախ այս ձեռն խնդիրը նախարընութեան յղելու կամ առանց յըման լուծելու կէտը բուէի զնել :

[Քնդմիտմներ]

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՖ . — Խօսք կուղեմ բուէն տառջ կանոնական գրտադրութիւնն մ'ընելու համար : Մտայ է որ Կանոնադրութիւնը կը տրամադրէ թէ խնդիր մը առանց նախարընութեան յղուելու որչում չտամայ . իսկ երբ նախաձեռնով ստիպուցականութիւն տալ աղուի, այն ատեն նախարընութեան յղելու հարկ չը մնար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ղիւանը կախարընութեան յղելու համար չէ որ բուէի պիտի զնէ այս ձեռն խնդիրը . այլ ըստ որում թէ և շատերը սրտըտղէս մերժելի է ըսին, անմը ալ նախաքըննութենէ անցնելու պէտքն առաջարկեցին, հետեւապէս ժողովին կամայր պիտի զիսեմ : Որոնք որ առանց նախարընութեան պէտք տեսնելու կանոնակի ձեռն մերժել կընդունին՝ ձեռքերնին վեր վերցնեն :

29 ձեռք համրուեցան :

Կարծեալ՝ որոնք որ ընդհակառակն նախարընութեան յղելու պէտքը կընդունին՝ ձեռքերնին վեր վերցնեն :

17 ձեռք համրուեցան :

Ըսել է թէ ժողովն իւր մեծամտութեամբը կորսէ որ այս կանոնակի ձեռն խնդիրը լուծուած նկատուի, և կը յանձնէ Սրբազան Պատրիարք Հօր՝ պէտք եղած աղբարարութիւնը հաղորդել

յայտ մտին Աշխատարայ կաթողիկոսին : Այժմ կը մնայ ընտրութեան տեղեկազրը ըսուէի զնել :

ՋԱՅՆԵՐ . — Քանի որ կանոնակը մերժուեցաւ, ալ ընտրութեան տեղեկազրը չմնար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ներքեցէք, ժողովին կամըր պիտի հարցնեմ . որոնք որ ընտրութեան տեղեկազր նկատելով հարկ կը տեսնեն յղել . . .

ՔԱՓԱՄԱՆՆԱՆ Մ . ԷՖ . — [Քնդմիտմով և յարմարածայն] Տեղեկազրին ս'ըր է, չկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Կաղաչեմ, մի զոչէք այդպէս :

Տ . ՅՈՎՀ . ՔՀ . ՄԿՐԵԱՆ . — Մահերազրով եղած ընտրութեան ձեռն ըսէք՝ Ատենապետ Էֆէնտի :

ՔԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Այդ կը հասկընամ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ծոտ աղէկ, այդ կերպով բուէի պիտի զնեմ : Որոնք որ կընդունին որ մահերազրութեամբ եղած ընտրութիւնն երթայ Նախաձեռնութեան զիւանին, ձեռքերնին վեր վերցնեն :

30 ձեռք համրուեցան :

[Արեւիկ]

Իսկ ասոր հակառակ՝ որոնք որ յըստը չեն ընդունիր և ընտրութեան վաւերացումը հարկ ըտեսնեն, նմանապէս ձեռքերնին վեր վերցնեն :

Ոչ որ ձեռք վերցնող չեղաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Որքեմն այս ալ լուծուեցաւ . ընտրութեան խնդիրը Նախաձեռնութեան զիւանին պիտի երթայ ժողովին սրա՞ մամբ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ . — Ուր է մահերազրութիւն, Ղիւանը բուէարկութեան


ձեին մէջ սխալմունք գործեց . պէտք է արձա- նագրուի այս :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ . ԷՖ . — Կարծեմ թէ այդ վերջին քուէարկութեան զօրութեամբը կոնդակն ալ ընդունուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ոչ . սխալ ըմբռնման տեղի չկայ . վերջին քուէարկութիւնը մահաւորա- գրութեամբ եղած ընտրութեան նկատմամբ էր . կոնդակի ձեւն արդէն մերժուած է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Օրակարգ , օրա- կարգ . օրակարգ :

Ուրիշ ձայներ ալ՝ թրակարգ կրկնեցին :



ՕՐԱԿԱՐԳ

Ընտրութիւն Քաղ. Ժողովոյ Ազգ. Վարչութեան

Ատենապետ Էֆէնտի Քաղաքական Ժող- վոյ ընտրելուց զեղջելի ցանկը ներկայա- ցրենքով , զոր վերջին անգամ՝ Ատենապետաց զիւանձը պատրաստած և կոչնագրոց հետ երես- վտիանաց յղուած էր , հրաւիրեց զԺողովն ի քուէարկութիւն նոյն ցանկին :

Նախ՝ յիշեալ ցանկը կարդացուեցաւ , որ է՝

- 1 Արէշ Էֆէնտի Կիւլպէնկեան
- 2 Արիկ » Ունճեան
- 3 Ալիքսան » Խօրատանճեան
- 4 Աւետիս » Հարէնց
- 5 Բարսեղ » Հալաճեան
- 6 Գէորգ » Ստիմարաճեան
- 7 Եղիա » Պէյլէրեան
- 8 Ենովք » Բուլճեան
- 9 Խաչիկ » Հաճիբեան
- 10 Կարապետ » Հաղարեան
- 11 Կարապետ » Մեծատուրեան
- 12 Մատթէոս » Ալիքսանեան

- 13 Միքայէլ » Մոմճեան
- 14 Մկրտիչ » Մուրատեան
- 15 Մկրտիչ » Ֆրէնկեան
- 16 Յակոբ » Արշակ
- 17 Յարութիւն » Մանուկեան
- 18 Յովհաննէս Պէյ Պ . Տատեւն
- 19 Նիկողոս Էֆէնտի Սուլուխանլեան
- 20 Պետրոս » Միրասեօղեան
- 21 Պօղոս » Ժամակոչեան
- 22 Ռուբէն » Գրիգորեան
- 23 Սենեքերիմ » Մանուկեան
- 24 Տիգրան » Գարակէօղեան
- 25 Տիգրան » Կիւմիւշկէրտան
- 26 Տիգրան » Փէշտիմալճեան
- 27 Տրդատ » Փափաղեան
- 28 Փիլիպպոս » Մուրատեան

ՄԱԳՍՏՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԷՖ . — Կանոնա- գրութիւնը կը սահմանէ նախապէս ցանկին ամ- բողջութիւնը քուէի դնել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Յանկին ամբող- ջութիւնը քուէի դնելը Ժողովին կարծիքն ըսել է . կուղէի այս մասին սղտիկ զխտողութիւն մը ընել , սակայն նախորդ խնդիրն այնքան զբողե- ցաց զմեզ՝ որ Ժողովին ժամերը կը խնայեմ , խի զխտողութիւնս կը վերապահեմ :

Ուրիշ խօսք ուղղ չըլլալով , անմիջապէս ընտրելուց ցանկին ամբողջութեամբ քուէի զըր- ուեցաւ և ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ Ժողովն :

Յետոյ քուէարկութեան ձեռնարկուելով , քուէամարի համար քննիչ կարգուեցան վիճա- կաւ :

- Տ . Մատթէոս Եսոս Խզմիրլեան
- Ռեթէոս Էֆէնտի Պէյլիճեան
- Յարութիւն » Մէրէմ-Պարի
- Պէորգ » Ապուլլոս

Քուէհամարը կատարուելով յետագոյ ար- զիւնքն ունեցաւ .

Թիւ քուէարկուող	74
անորոշ քուէ ջնջեալ	2
<hr/>	
ճագոյն մասն է 37	72 որոյ մե-

1 Պէորգ Էֆ . Սթիմարաճեան	72
2 Կարապետ » Հաղարեան	72
3 Սենեքերիմ » Մանուկեան	72
4 Խաչիկ » Հաճեան	71
5 Տիգրան Էֆ . Գարակէօղեան	71
6 Տիգրան » Կիւմիւշկէրտան	71
7 Պօղոս » Ժամակոչեան	69
8 Արէշ » Կիւլպէնկեան	42
9 Մատթէոս » Ալիքսանեան	42
10 Միքայէլ » Մոմճեան	42
11 Տիգրան » Բէշթըմալճեան	42
12 Մկրտիչ » Ֆրէնկեան	41
13 Արիկ » Ունճեան	40
14 Մկրտիչ » Մուրատեան	39

Ըստ որում ընտրելոց ամենն ալ քուէից րացարձակ առաւելութիւն ստացած էին , Ժո- ղովը սոյն ընտրութիւնը վաւերացուց , և ընտ- րեալը Քաղ . Ժողովոյ անդամ ՀՈՅԱԿՈՒՅՑԱՆ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՋ . — Կը շնորհաւորեմ և կը յուսամ որ ներկայ ժամուկ պարագայից մէջ իրենց եռանդը կը կրկնապատկեն և ազգին երախտագիտութեան արժանի կըլլան :



Բ .

Խնդիր արգային դատարարութեան . — Երկ- րորդ ընտրութեան տեղնկացոյց Պատարարարութեան Գիւանին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ինչպէս կը յիշէ Ժո- ղովը , նախորդ րացման վերջին նոտին մէջ Պատարարարութեան զիւանի տեղնկացոյցն ընդհանրութեան վրայ վիճարանութիւնը փակ- ուելէ ետեւ , անոր առաջին ընթերցումը քուէի զրուելով ընդունուած և երկրորդ ընթերցման

անցնել որոշուած է : Այժմ երկրորդ ընթերց- ման մէջ մասնաւորութեանց վրայ սխալ վիճա- բանի Ժողովը . հետեւապէս խօսք ուղղուեցը կը հրաւիրեմ ի բեմ :

ՔԱԶԱԶԵԱՆ Յ . ԷՖ . — Կը յիշեցնեմ Ժո- ղովին որ այս խնդրոյն վրայ ասիէ առաջ Վար- չութեան Քաղ . Ժողովին կարծիքն առնուելու համար Պատարարարութեան զիւանի տեղնկացոյցն ի պաշտօնէ անար յղուած էր Ժողովին կողմէ : Սակայն Քաղ . Ժողովն իւր վերահաս հրաժա- կանին պատճառաւ չկրցաւ իւր կարծիքը բերել . րոյց ըստ որում նոր Քաղ . Ժողովն այսօր ընտրուեցաւ , հարկ է նորընտիր Քաղ . Ժող- վին կարծիքն առնուլ . արդէն նախորդ Քաղա- քական Ժողովն այս մասին զանազան ձեռնար- կութիւններ ըրած է , զորս սխալ գտնէ հարկաւ նորընտիր Քաղ . Ժողովը , և թերեւ աւելցը- նելիք կամ պակասեցնելիքներ ունենայ :

Տ . ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ . — Ժողովը նախորդ Քաղաքական Ժողովին յանձնած էր որ 15 օրէն բերէ իւր կարծիքը . րոյց նա չը կրցաւ որոշեալ սրոյմանաժամուռ բերել :

ՔԱԶԱԶԵԱՆ Յ . ԷՖ . — Եթէ Մատթէոս սրբազան նախորդ Քաղաքական Ժողովն ամ- բաստանելու մտք կըսէ այդ խօսքերն , իրրև ամբաստանութիւն թող ներկայացնէ . րոյց ես այնպէս չեմ նկատեր . ստոյգ է որ 15 օրէն իր կարծիքը բերելու պայմանաւ յղուած էր խնդիրը նախորդ Քաղ . Ժողովին . սակայն պատճառ- ներ կան , որոց համար ուշացաւ , ինչպէս իւր համարատուութեան մէջ սխալ տեսնուի :

Տ . ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ . — Ամբաստանութիւն չէ ըսածս . եղածը պատմեցի :

ՔԱԶԱԶԵԱՆ Յ . ԷՖ . — Ինչպէս որ ըսի , նորէն կը կրկնեմ թէ նախորդ Քաղ . Ժողովոյ յապաղման մասին եղած խօսքերուն պատաս- խանը սխալ տեսնուի իւր համարատուութեան մէջ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Մատթէոս սրբա-

զանին ըստ ը սխալ է . Ժողովը Ղատարարա-
կութեան ղիւանի տեղեկագրին առջի օրէն իւր
Օրակարգն անցունել որոշելէ կտու , թէ և Վարչու-
թեան պատիւը պահելու համար 15 օր պայ-
մանաժամու մէջ անոր կարծիքն ալ ուզեց , սա-
կայն Վարչութիւնն իւր կարծիքը որոշեալ պայ-
մանաժամուն մէջ թէ՛ բերէ և թէ՛ չբերէ , Ժո-
ղովն անպատճառ իւր վիճարանութեան նիւթ-
ով ընէր խնդիրը՝ տաանց ստուեղու Վարչ-
ութեան բերելիք տեղեկագրոյն . զի այս մտօր
էր որ աւարկուեցաւ թէ Վարչութիւնն եթէ չը
բերէ իւր կարծիքն՝ Ի՞նչ պիտի ընենք :

Իսկ Ժողովը հաշիւ թէ իւր նախորդ բաց-
ման վերջին նստին հասաւ Ղատարարակութեան
ղիւանի տեղեկագրին առաջին ընթերցումը ՔԸ-
ւարկութեամբ փակելու , և մինչդեռ այսօր տ-
նոր երկրորդ ընթերցման անցնելով՝ խնդրոյն
մանրամասն քննութեան պիտի ձեռնարկէ , նս-
ւընտիր Վարչութեան կարծիքն ուղեւու խնդիր
կըլլայ : Ի՞նչ անի՞ծեալ խնդիր է այս , որ ամեն
անգամ հոս յուզուելու եկած սաեւն՝ միշտ
պատճառներ կրտնուին յետաձգելու . երբեմն
զրամական պատճառ , երբեմն վարչական տաղ-
նաց , ո՞ր մէկն ըսեմ : Միթէ նոր ընտիր Վարչ-
ութիւնն իրեն համար նուա՞զ կարեւոր զրաղ-
մանքներ ունի , և պիտի կրնայ ժամանակ զըտ-
նել զատարարակութեան խնդրոյն վրայ կարծիք
բերելու համար : Մէկ քանի խնդիրներ կան՝
զորոնք Ժողովս լու կրնէ որ ինք ստանձնէ և
լուծէ և զործարարութիւնը միայն յանձնէ Վարչ-
ութեան , ինչպէս են Ղատարարակութեան և
Պիւտեճի խնդիրներն :

Նախորդ Վարչութեան անգամները թող
հող չընեն այժմէն թէ զիրենք կամրատուանենք .
մեր կրեց համարատուութեանը կազմանք . ո՞ր
է համարատուութեան տեղեկագրինն՝ որ Ժո-
ղովն նոր բացման երկրորդ նստին Օրակարգն
անցնելու էր ըստ կամանի . այսօր վեցերորդ
նիստերնիս է , զեւ չեն բերած : Երբ այդ հա-
մարատուութիւնը զայ , այն սաեւն չենք խնու-
յեր եթէ ստարասեւ կամ զովիւ հարկ է նա-
խորդ Վարչութիւնը :

Այդ՝ կուտարկեմ որ առանց Վարչու-
թեան կարծիքը հարցնելու և անոր տեղեկագրին
ստուելու , Ժողովս անմիջապէս Ղատարարա-
կութեան ղիւանի տեղեկագրոյն երկրորդ ըն-
թերցման անցնելով՝ անոր մանրամասն կէտե-
րուն վրայ պէտք եղած վիճարանութիւնը բա-
նայ , և եզրակացութիւնները քուէարկէ ժամ-
յառաջ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ . ԷՑ . — Եթէ այս խորնո-
ւոյն մէջ յուզուի կէտ մը կայ , այն է որ մինչ-
դեռ զատարարակութիւնն Աղղին համար կեն-
սական խնդիր մ'ըլլալը համաձայնութեամբ ըն-
դունուած է , այսօր անպատշաճ եղանակաւ մը
կը ներկայանայ մեզ : Այսպիսի խնդրոյ մը վը-
րաց որքան պող տրիւնով խորհուի , այնքան
աղկէ է : Նախ՝ Փարիսոսեան Էֆէնտի Ի՞նչ ա-
նի՞ծեալ խնդիր է ըստ . սակայն իւր սխալա-
րութեան արդիւնքն էր : Երկրորդ՝ այս խնդրոյն
մէջէն նախորդ Քաղաքական ժողովին ղեմ՝ ամ-
բատունութեան խօսք մը հանեցին . շտտին ը-
սելով՝ ևս Մատթէոս եղիսիպոսի խօսքին մէջ
ամբատունութիւն չտեսոյ , և ինքն ալ հաս-
տատեց ամբատունութեան մտօր ըսած չըլլալը .
ստայդ է թէ և որ 15 օրէն կարծիք բերելու
պայմանու նախորդ Վարչութեան յանձնարա-
րութիւն եղած էր , սակայն եթէ նա իւր կար-
ծիքը չբերէր , Ժողովը նորոտակ չունէր խնդիրն
եւ ձգելու . բայց թէ ինչո՞ւ նախորդ Քաղա-
քական ժողովն իւր կարծիքը բերել յատարեր
է Ղատարարակութեան խնդրոյն վրայ , ստոր
զէմ Քաղաքեան Էֆէնտի ի ղիւանց նոյն ժողո-
ւոյ յայտնեց թէ պատճառներ կան . շտտնք պի-
տի տեսնուին իրենց համարատուութեան մէջ .
Ռերեմն Ի՞նչ կը մնայ մեզ . տեղեկագիր մը ու-
նինք Ղատարարակութեան ղիւանէն , որու երկ-
րորդ ընթերցման մէջն է . այդ տեղեկագիրը
քանի մը եզրակացութիւններ ունի , որոց ստա-
ջինն է զատարարակութեան խնդրոյն ստիարա-
կանութիւն տալ : Մտիտողականութիւն տրուել
է արդէն . սրեմն այս կէտը ըսծուած է : Երկ-
րորդն է Օրակարգն անցունել Վարժարանաց բա-
րեկարգութեան Օրակարգը . և զայն յողուած

սա յողուած բնեւէ : Այս ալ խնդրոյն միակ օ-
րինաւոր կէտն է , որոց քննութիւնը երկրորդ
ընթերցման մէջ յողուած սա յողուած պիտի
ըլլայ : Երրորդն է հաստատուել Ղալաթիոյ
Կեդրոնական Ռուսմարանի կամ Վարժարա-
տանոցին հիմնարկութիւնը և յանձնարարել
Աղղային Վարչութեան՝ անոր ուսմանց ծը-
րագիրն ու ընթացից կանոնադիրը բերել
Ժողովին ի վաւերացումն : Այս ալ յը-
ղել հա՞րկ է թէ ոչ , պիտի սրտուի : Չորրորդն
է որոշել թէ Կեդր . Մասուկի պիւտեճին մէջ
յանուն զատարարակութեան ծախուց զուսար
մը ստանաներն անհրաժեշտ է : Արդէն նա-
խորդ Քաղաքական ժողովն առաջիկային համար
զուսար մը զրեր է իւր շինած պիւտեճին մէջ
զատարարակութեան մասին , բնականապէս պէտք
է ստուել թէ նոր ընտիր Քաղ . Ժողովը պիտի
ընդունի , թէ ոչ բարեխոսութիւն մը պիտի ա-
ռաջարկէ այդ մասին : Հինգերորդ և վերջա-
պէս Ռուսմական խորհրդոյ միւս առաջարկու-
թիւններն յղել սա Աղղ . Վարչութիւնն ի
պարտաւորապէս անօրէնութիւն : Այս ալ յը-
ղում մ'է , զոր ընդունելու և Վարչութեանէն
զայլք տեղեկագրին ստուելու է : Ռուսի ուրիշ
բան չմնար մեզ , բայց եթէ խնդրոյն օրինակին
կէտին , այն է Վարժարանաց բարեկարգութեան
ծրագրին յողուածոց քննութեան անցնել , իսկ
մնացեալ կէտերն սա Վարչութիւնն յղել պա-
տասխանելու համար :

ԱՊՏՈՒՂԱՆՉ Գ . ԷՑ . — Ղատարարակու-
թեան ղիւանի տեղեկագրոյն վաւերացուելն
յառաջ կուզեմ որ խօսքն ինձ տրուի քանի մի
զիտաղութիւններ ընելու համար այնպիսի կեն-
սական կէտերու մասին՝ որոնք տեղեկագրին
զուրա թողուած են . և զորս Ժողովը թերեւ
վերադասել ուզելով Վարչութեան յղէ , ա-
նանց վրայօր տեղեկութիւն կամ բացատրութիւն
առնելու համար :

ՄԱԳՍՈՒՑԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԷՑ . — Իրիւ նա-
խորդ Քաղաքական ժողովն անգամներէն մին
կը յայտնեմ թէ սաեւարան Էֆէնտիներու խօ-

պից մէջ Վարչութեան ղեմ՝ ամբատունութիւն
չեմ տեսներ : Մեր ընկերներէն Քաղաքեան
Էֆէնտին Վարչութեան կարծիքն առնուի ըստ .
վան ղի զատարարակութեան խնդրոյն նկատ-
մամբ արդէն նախորդ Քաղ . Ժողովն ալ ձեռ-
նարկութիւններ ըրած էր , զորս իւր կանխաձա-
հրածարման պատճառաւ չկրցաւ տեղեկագրել
Աղղային ժողովը : Ռուսի ես ալ Եւսուֆեան
Էֆէնտի պէս կուտարկեմ որ Ժողովն այս
խնդրոյն օրինակին կէտին քննութեանը ձեռ-
նարկէ . իսկ այն կէտերն՝ որոց համար Վարչու-
թեան կարծիքն առնուլ հարկ է , սա Վարչու-
թիւնն յղել սրտէ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՑ . — Կը կրկնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Իրր տեղեկարեր Ղատ-
արարակութեան ղիւանի հարկ կը համարիմ քա-
նի մի խօսք ընել այս նիւթին վրայ՝ միտերը
պարզելու համար , և յետ այնորիկ պիտի բուկի
զնեմ :

Ասկէ առաջ Ղատարարակութեան տեղե-
կագրին առաջին ընթերցման միջոցին եղած վի-
ճարանութեան մէջ անոր բերած եզրակացու-
թեան հինգ կէտերն ալ օրինակին նկատուե-
ր են , որ այնպէս չէ : Եւսուֆեան Էֆէնտի խիստ
ըստ բացատրեց ըսելով թէ օրինակին կէտը մէկ
է , և այն է Վարժարանաց բարեկարգութեան
ծրագիրը՝ զոր Ռուսմ . Խորհուրդ մը պատրաս-
տած է արդէն , և որ Ժողովն վիճարանու-
նութեանն ու վաւերացմանը կարօտ է : Մնա-
ցած կէտերուն մէջ կան այնպիսիներ՝ մանա-
ւանդ զրամական կէտն , որոց մասին Վարչու-
թեան կարծիքը չտանուած որոշում մը չենք
կարող ընել : Ռերեմն առաջիկայ նստին մեր
զործն ընելու ենք օրինակին կէտին՝ այն է Վարչ-
ժարանաց բարեկարգութեան Օրակարգին քննու-
թիւնը . իսկ միւսները կրնանք Վարչութեան
յղել , որպէս ղի կարելի եղածին չափ վաւթով
իւր կարծիքը բերէ մեզ :

Չայս ըսելով Ա.տեսնուեալ Էֆէնտին քուկի
զրու նախ՝ Վարժարանաց բարեկարգութեան
ծրագրին Օրակարգն անցնելու և յաջորդ նըս-

տին յօդուած սու յօդուած քննութեան ենթարկուելու առաջարկութիւնը, զոր Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

Յետոյ՝ Ատենապետ Լ. Ֆէնտին սրատրատուեցաւ նոյնպէս քուէի դիւել տեղեկագրին եղրակացութեան համեմատ յետադոյ 3 կէտերուն յղումն սու Վարչութիւնն:

1° Հաստատութիւն Ղալաթիոյ Կեդրոնական Ուսումնարանի կամ Վարժարանացին, և յանձնարարութիւն սու Ա. Ղ. Վարչութիւնն անոր ուսմանց ծրագիրն ու ընթացից կանոնադիրը բերելու համար:

2° Կեդրոնական Մատուի տիւտճէին մէջ յանուն Գաստիրակութեան գումար մը սահմանել:

3° Ուսումնական խորհրդոյ միւս առաջարկութիւններն յղել սու Ա. Ղ. Վարչութիւնն ի սրտատուարտչաճ տնօրէնութիւն:

ՊԵՆԱՆ Թ. ԷՅ. — Տանուհինք օր սոյմանաժամու խօսք կըլար բիչ մը յառաջ: կարծեմ թէ նորքնոր Քաղ. Ժողովին տոջև ԷԼՆԵՂԻ անագին գրադմանց մէջ, ուր հարկաւ սյս

Գաստիրակութեան խնդրոյն վրայ խը նախորդին արձանագրութիւններէն մինչև որ սկտը ԷՂաճ տեղեկութիւններն ստանայ՝ բաւական ժամանակ սլիտի տնցնի. 15 օր սոյմանաժամ սահմանել իրտտ բիչ է. ուստի առանց սոյմանաժամի հարկ է թողուլ նմա որքան կարելի է կարճ ժամանակի մէջ բերել խը կարծիքն:


[Հաւանարեան ձոյներ:]


Հետևապէս՝ Գաստիրակութեան դիւանի տեղեկագրոյն եղրակացութեան 3րդ, 4րդ, և 5րդ կէտերուն ամբողջապէս և վաղ ընդ փոյթ սրատասխանելու յանձնարարութեամբ Վարչութեան յղումն ալ քուէի գրուելով, ԸՆԴՈՒՆՈՒՆԱԻ Ժողովն:

Որոշուեցաւ նուե՛ որ յաջորդ նիտան ամսէ մը ետք գումարի:

Ատեանը գոյուեցաւ ժամն 10 ին:

ԱՏԵՆԱՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Հ. Ս. Արաճաճեան Նորեմ





ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1.	Խորէն	Եսլիակ	Մաթթարեան	Ա. ԱՏՆԱՊԵՏ
2.	Յակոբ	Վարդ	Փափաղեան	Ա. ԱՏՆԱԴՊԻՐ
3.	Գէորգ	Ա. Գ. Ք.	Արծրունի	Բ. ԱՏՆԱՊԵՏ
4.	Խաչատուր	»	Տ. Գարրիէլեան	Բ. ԱՏՆԱԴՊԻՐ
5.	Գարրիէլ	»	Չիչէքեան	
6.	Յովհաննէս	»	Մկրեան	
7.	Աբիստակէս	»	Քարակեօմրիկի	
8.	Պետրոս	»	Փափաղեան	
9.	Իգնատիոս	»	Մանուկեան	
10.	Գրիգոր	»	Սէթեան	
11.	Սթանաս	քնյ	Ս. Խաչ յիւսկ	
12.	Մեսրոպ	»	Երէցեան	
13.	Միքայէլ	»	Պալատու	
14.	Զարմաթա	»	Բերայի	

1	Հայկական	1890	1
2	Հայկական	1891	2
3	Հայկական	1892	3
4	Հայկական	1893	4
5	Հայկական	1894	5
6	Հայկական	1895	6
7	Հայկական	1896	7
8	Հայկական	1897	8
9	Հայկական	1898	9
10	Հայկական	1899	10
11	Հայկական	1900	11
12	Հայկական	1901	12
13	Հայկական	1902	13
14	Հայկական	1903	14
15	Հայկական	1904	15
16	Հայկական	1905	16
17	Հայկական	1906	17
18	Հայկական	1907	18
19	Հայկական	1908	19
20	Հայկական	1909	20

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՂԴՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս
Լուսատոբիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրախաճատաց քով: